1910440

ԳՈՐԾ N 1/11 - 2006թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆ
400

Լոռու մարզի առաջին ատյանի դատարանը

Նախագահությամբ՝ դատավոր Բ.Գրիգորյանի
Քարտուղարությամբ՝ Տ.Կյուրեղյանի
Մասնակցությամբ՝ Մեղադրող Ս. Վարդանյանի

,2006թ-ի հուլիսի 31-ին, Վանաձոր քաղաքում, դռնբաց դատական նիստում քննության առնելով քր. գործն ըստ մեղադրանքի Վահան Սուրենի Մադաթյանի՝ ծնվ.02.02.1963թ Վանաձոր քաղաքում, հայ ՀՀ քաղաքացի, բարձրագույն կրթությամբ, ամուսնացած, խնամքին 3 անձ, նախկինում չդատված,ֆիզիկապես վատառողջ, «Վահան Մադաթյան» ՍՊԸ-ի հիմնադիր նախագահ, բն. է Վանաձոր քաղաքի, Վարդանանց 47/40:

Մեղադրվում է ՀՀ քր. օր-ի 190 հոդ-ի 1-ին մասով:

Դատաքննությամբ և քր. գործի նյութերով դատարանը.

ՊԱՐԶԵՑ

Վահան Մադաթյանը հանդիսանալով «Վահան Մադաթյան» ՍՊԸ-ի հիմնադիր նախագահ, 2003թ-ի փետրվարի 21-ից մինչև 2005թ-ի մարտի 7-ը Վանաձոր քաղաքի Աղայան 95 հասցեում գտնվող փայտամշակման արհեստանոցում իրականացրել է փայտամշակման աշխատանքներ, որի ընթացքում տարբեր տեղերից ձեռք է բերել փայտանյութ, որից պատրաստել է բարձր որակի մանրատախտակ և շրիշակներ:

2003թ-ի սեպտեմբեր ամսին ամբաստանյալ Մադաթյանը ԼՄ Վահագնաձոր գյուղի բնակիչ Ջանիկ Արսենյանից առանց համապատասխան փաստաթղթի գնել է 20խմ վառելափայտ և 9.5 խմ շինափայտ՝ 388.000 դրամ ընդհանուր արժողությամբ, որի մասին հաշվապահական փաստաթուղթ չի լրացրել, տեղափոխել է իր արտադրամաս, պատրաստել է մանրատախտակ, շրիշակ, շերտածողիկներ և արտահանել ԱՄՆ, լրացնելով դուրս գրման օրինական փաստաթղթեր:

Այդ արտադրանքից վաճառվել է նաև «Արագածի բերրիություն» և «Դ-Տելեկոմ» ՓԲԸ-ներին:

Ամբաստանյալ Վահան Մադաթյանը առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր չճանաչեց, հայտնեց որ ինքը տարբեր անձանցից գնել է փայտ, վերջիններս փաստաթղթով այն դուրս են գրել անտառտնտեսությունից, փայտը տեղափոխել իրենց արտադրամաս, իսկ իրենք իրենց հերթին անտառտնտեսությունից դուրս գրման վերաբերյալ փաստաթղթերը պատճենահանել և կցել են իրենց մոտ եղած փաստաթղթերին: Շատ դեպքերում էլ երբ ինքը անձամբ է գնացել փայտը գնելու, ներկայացրել է տնօրեն Սուրեն Ասլանյանի կողմից տրված լիազորագիր: Բերված փայտանյութը բեռնաթափվել է արտադրամասի տարածքում, որից հետո մշակվել է:

Առարկելով մասնագետ Բեկչյանի գործով տրված եզրակացության դեմ, պատճառաբանեց, որ նրա կողմից հաշվարկը կատարված է սխալ, հաշվի չի առնվել մի քանի հանգամանքներ, օրինակ մանրատախտակի հումքը չորացնելու նպատակով 450 քմ տեղավորվում է չորանոց, որը չորանալուց հետո ծավալը փոքրանում է և ստացվում մոտավորապես 320-330 քմ մանրատախտակ, իսկ դրսում չորացնելու դեպքում ստացվում է մոտավորապես 420 քմ մանրատախտակ:

Արտադրամասում իրենք ունեն 4 տիպի հաստոց, որոնցով փայտը մշակելու արդյունքում կորուստը լինում է տարբեր չափերի:

Տարբեր է նաև փայտանյութի որակը: Գուգարքի անտառտնտեսությունից բերվածը ունի ավելի ցածր որակ, քան Լալվարի կամ Նոյեմբերյանի անտառտնտեսությունից բերվածները:

2003թ-ից ունի ստանալու մոտավորապես 50խմ դուրս գրված փայտ, որը մինչև այժմ չի կարողացել ստանալ:

Վկա Ջանիկ Արսենյանը իրենց արտադրամաս մեքենայով փայտ չի բերել: Ինքը նրան տվել է 100.000 դրամ գումար, սակայն նրա մոտից արտադրամաս է բերել ընդամենը 3խմ վառելափայտ, իսկ մնացած փայտը չի կարողացել բերել, քանի որ Արսենյանը բռնվել է և այդ փայտը չի կարողացել տալ:

Ամբաստանյալ Վահան Մադաթյանի ցուցմունքը իրեն մեղավոր չճանաչելու մասին դատարանը արժանահավատ չի գտնում, այն դիտում է որպես քրեական պատասխանատվությունից խուսափելու փորձ և հերքված է համարում ներքոհիշյալ ապացույցներով

Վկա Սուրեն Հրաչիկի Ասլանյանի ցուցմունքով այն մասին, որ 2003թ-ից «Վահան Մադաթյան» ՍՊԸ-ում աշխատում է որպես տնօրեն, որտեղ կատարվում է փայտի մշակում: Իրենք փայտանյութ բերել են տարբեր տեղերից, հաշվապահական փաստաթղթերով դրանք մուտքագրել են, և մշակումից հետո հիմնականում արտահանել են ԱՄՆ: Փայտանյութի հայթհայթման և տեղափոխման աշխատանքներով զբաղվել է Մադաթյանը: Ինքը զբաղվել է արտադրության կազմակերպման աշխատանքներով: Չի

հիշում, որ երբևէ առանց փաստաթղթի փայտանյութ մուտք եղած լինի ՍՊԸ: Իսկ փաստաթղթերի համեմատած 20 խմ վառելափայտ և 9.5 խմ շինափայտ ինչպես է ավելացել, ինքը տեղյակ չէ:

գթ147-150, դատական նիստի արձանագրություն

Վկա Մովսես Լևոնի Շովգարյանի ցուցմունքով այն մասին, որ աշխատում է «Վահան Մադաթյան» ՍՊԸ-ում որպես պահեստապետ: Միաժամանակ կարգավորում է չորանոցի աշխատանքները: Իրենց փայտանյութը ստացել են տարբեր տեղերից, կազմել են համապատասխան փաստաթուղթ: Ինքը հիմնականում զբաղվել է չորանոցով: Չորանոց մտած փայտանյութի ծավալը ինքը չի հաշվել:

գթ. 259-260 և դատական նիստի արձանագրություն

Մասնագետ Սենիկ Բեկչյանի ցուցմունքով այն մասին, որ Լոռու մարզի քննչական բաժինը իրենց տրամադրել «Վահան Մադաթյան» ՍՊԸ-ի անտառանյութի մուտքի և ելքերի փաստաթղթերը, որոնց հիման վրա ինքը կատարել է ստուգում: Արտադրամասը չի գործել գոյություն ունեցող ստանդարտների համապատասխան, այլ կատարել է պատվերներ, տարբեր երկրներից, կամ տեղական պատվերներ: Իր մոտի փաստաթղթերի հիման վրա ինքը հաշվել է արտադրամաս մուտք եղած փայտի ծավալը, ինչպես նաև ստացած արտադրանքի, վառելափայտի և թափոնի ծավալը: Կատարել է խրոնոմետրաժ և ստացված արդյունքներով կազմել է մասնագիտական եզրակացություն: Խրոնոմետրաժը կատարել է միջին որակի տեսակի փայտանյութով, չնայած տարբեր տեսակի փայտանյութից դուրս է գալիս տարբեր չափերի արտադրանք: Իր կարծիքով հայտնաբերված 20 խմ ավելացած վառելափայտի և 9.5 խմ շինափայտի ավելցուկը, նորմալ երևույթ է, պարզապես ճիշտ փաստաթղթային ձևակերպումներ չեն կատարվել:

գթ261-265, դատական նիստի արձանագրություն

Վկա Ջանիկ Արսենյանի ցուցմունքով այն մասին, որ պայմանագրով աշխատել է Եղեգնուտի անտառապետությունում: Իրենք բրգադով զբաղվել են քամատապալ ծառերի փայտանյութը հանելով և այն պահեստավորելով: Անտառապետ Արարատ Բարսեղյանը իրեն տեղեկացրել է, որ դուրս գրվող փայտ կա, Վահան Մադաթյանը պետք է գա տանի, և իրեն հանձնարարել է մի քանի խորանարդ մետր փայտ առանձնացնել, որպեսզի նա գա նմուշը տեսնի: Վահան Մադաթյանը իրեն տվել է 100.000 դրամ՝ փայտ դուրս գրելու փաստաթուղթ վերցնելու համար, սակայն ինքը փաստաթուղթ չի վերցրել, սակայն իմացել է, որ Մադաթյանը 2-3 խմ փայտ է տարել, իսկ մնացած փայտը ինքը չի կարողացել նրան տալ, քանի որ բռնվել է:

գթ 273-274, դատական նիստի արձանագրություն

Ամբաստանյալ Մադաթյանի մեղքը դատարանը ապացուցված է համարում նաև հետևյալ ապացույցներով

գթ 12-13 Դեպքի վայրի զննության մասին արձանագրությամբ, ըստ որի «Վահան Մադաթյան» ՍՊԸ արտադրամասի տարածքում, որը գտնվում է Վանաձորի «Լուսատեխնիկական» գործարանի հյուսիս-արևելյան մասում, արձանագրվել է մեծ քանակությամբ տարբեր ծառատեսակների գերաններ և տախտակ:

գթ 261-263 Մասնագիտական եզրակացությամբ, ըստ որի 2003-2004թ-ի ընթացքում «Վահան Մադաթյան»ՍՊԸ արտադրամասում առանց համապատասխան փաստաթղթերի մուտք է եղել 20 խմ վառելափայտ և 9,5 խմ շինափայտ, որի վերամշակումը հնարավոր ձևանապատով իրացվել է:

գթ 270 Գույքի վրա կալանք դնելու մասին արձանագրությամբ, ըստ որի ընկերության արտադրամասի տարածքում կալանքի տակ է դրվել 15խմ շինափայտ և 20 խմ վառելափայտ, գումարով 388.000 դրամ:

գթ 271-272 Եզրակացությամբ Մադաթյանի կողմից որպես մեղադրյալ տված ցուցմունքով, որում նա ընդունել է, որ գործով վկա Ջանիկ Արսենյանից առանց փաստաթղթի գնել է մոտ 18-20խմ վառելափայտ և 9 խմ շինափայտ:

գթ 273-274 Վկա Ջանիկ Արսենյանի եզրակացությամբ տված ցուցմունքով, ըստ որի ինքը Վահան Մադաթյանին 2003թ-ի աշնանը վաճառել է մոտ 8-9 խմ շինափայտ և 18-20 խմ վառելափայտ:

գթ 279-280 Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի 04.02.2004թ-ի դատավճռով, ըստ որի վկա Ջանիկ Արսենյանը ՀՀ քր. օր-ի 296 հոդ-ի 1-ին մասով, 2003թ-ի օգոստոս-սեպտեմբեր ամիսների ընթացքում, ապօրինի ծառահատում կատարելու համար, դատապարտվել է ուղղիչ աշխատանքների 1 տարի ժամանակով:

Այսպիսով գնահատության առնելով դատաքննությամբ ձեռք բերված և քրեական գործում եղած ապացույցները դատարանը գտավ, որ ամբաստանյալ Մադաթյանին առաջադրված մեղադրանքը ապօրինի ճանապարհով ստացված եկամուտներն իրականացնելու մեջ հաստատված է, արարքը ՀՀ քր. օր-ի 190 հոդ-ի 1-ին մասով որակված է ճիշտ, որի համար ամբաստանյալը ենթակա է պատիժ կրելու:

Պատիժ սահմանելիս դատարանը որպես ամբաստանյալ Մադաթյանի պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք է դիտում այն, որ նա տառապում է ծանր հիվանդություններով, որի պայմաններում նպատակահարմար է գտնում, սահմանել պատիժ տուգանքի ձևով:

Նշված պարագայում ամբաստանյալի նկատմամբ ենթակա է կիրառելու ՀՀ անկախության հռչակման 15-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին 07.07.06թ-ի ՀՀ ԱԺ որոշման 1-ին կետի «գ» ենթակետը, որի համաձայն ամբաստանյալ Մադաթյանը պատժի կրումից ենթակա է ազատման:

Գույքի վրա կալանք դնելու մասին քննիչի որոշումը ենթակա է թողնելու անփոփոխ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 357-360 հհ դատարանը.

401

ՎՃԻՌ

Վահան Սուրենի Մաղաքյանին մեղավոր ճանաչել ՀՀ քր. օր-ի 100 հոդ-ի 1-ին մասով և դատապարտել նրան տուգանքի 400.000 դրամ չափով:

Կիրառել ՀՀ անկախության հռչակման 15-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին 07.07.06թ-ի ՀՀ ԱԺ որոշման 1-ին կետի «գ» ենթակետը և դատապարտյալ Մաղաքյանին պատժի կրումից ազատել:

Խափանման միջոց ստորագրություն չհեռանալու մասին վերացնել:

Գույքի վրա կալանք դնելու մասին որոշումը թողնել անփոփոխ:

Դատապարտյալ Մաղաքյանից հօգուտ պետբյուջեի բռնագանձել 388.000 դրամ պետությանը պատճառված վնասի գումարը:Բռնագանձումը տարածել կալանքի տակ գտնվող 15խմ շինափայտի և 20 խմ վառելափայտի վրա:

Դատավճիռը ենթակա է բողոքարկման ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարան 15 օրվա ընթացքում:

ԴԱՏԱՎՈՐ Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ծանոթություն - Սույն գործով [illegible] [illegible] չի բողոքարկվել և դատավճիռը մտել է օրինական ուժի մեջ 16.08.2006թ.

Դատավոր Ռ. Գրիգորյան